ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՍՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՊԱՊՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
էլ. հասցե՝ harutyun.papoyan@mail.ru

DOI: 10.24234/scientific.v1i46.139

ԱՄՓՈՓՈՒՄ

Պետական նոր չափորոշիչներով հասարակության և կառավարության կողմից կրթության առջև դրված հիմնական խնդիրը անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է, որը հանդիսանում է ուսումնական հաստատությունների առջև դրված գլխավոր պայմաններից մեկը: Դասավանդվող առարկայի ընդհանուր նպատակները հակիրճ ձևակերպված են ուսումնական ծրագրերում, որոնք առավել որոշակիացվում են առանձին ուսումնական և մեթոդական ձեռնարկներում:

Հոդվածում ներկայացվում է պատմական կրթության համադպրոցական նպատակներն ու դրանց հասնելու մի շարք եղանակներ:

Պատմական կրթությունը մարդկային գիտակցության ձևերից մեկն է և այն երիտասարդ սերնդին դաստիարակելու համար օգտագործվել է անհիշելի ժամանակներից և այսօր առանց դրա հասարակությունը չի կարող առաջընթաց ունենալ, որովհետև այստեղ խաչաձևվում են ազգայինն ու համամարդկայինը, պետականությունն ու պետական շահերը, որոնցից էլ բխում են աշխարհայացքային և մեթոդաբանական հիմնախնդիրները:

Մեթոդական գրականության մեջ այս հարցերին անդրադարձել են Ն.Գ. Դայրին, Ե.Ե. Վյազեմսկին, Պ.Վ. Գորան, Վ. Օկոնը, Կ. Ջ. Ջոնսը և այլք: Ցավալի է, որ Հայաստանի Հանրապետությունում պատմության դասավանդման մեթոդիկայի զարգացման այս կարևոր հարցերին նվիրված լուրջ աշխատություններ դեռևս չկան:

Հոդվածի նպատակն է բացահայտել սովորողների պատմական կրթության համադպրոցական խնդիրների էությունը, որոնք կնպաստեն երիտասարդ սերնդի հայրենասիրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, բնապահպանական և մի շարք այլ հիմնախնդիրների դաստիարակությանը:

Բանալի բառեր՝ պետական չափորոշիչ, դասավանդման նպատակներ, դասավանդման խնդիրներ, ուշադրություն, խոսք, երևակայություն, մտածողություն, ուսուցողականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հասարակություն զարգանալով իր դպրոցի առջև դնում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ են պետության քաղաքական գործունեության պահպանության, հասարակական ինստիտուտների զարգացման համար:

Արդի ժամանակաշրջանում հասարակության կողմից կրթության առջև դրված հիմնական խնդիրը անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է, որը հանդիսանում է ուսումնական հաստատությունների առջև դրված գլխավոր պայմաններից մեկը: Երբ հիմնական նպատակը հայտնի է, տեսաբան մեթոդիստները, առանձին առարկաների մեթոդիկաներին՝ այդ թվում պատմության դասավանդման, վերաբերվում են յուրովի: Ելնելով տվյալ գիտության առանձնահատկություններից՝ ձևավորում են իրենց առարկայական նպատակներն ու խնդիրները:

Դասավանդվող առարկայի ընդհանուր նպատակները հակիրճ ձևակերպված են ուսումնական ծրագրերում, որոնք ավելի որոշակիացվում են առանձին ուսումնական և մեթոդական ձեռնարկներում:

Այժմ դպրոցական պատմության կրթության ընդհանուր նպատակները համընկնում են համադպրոցական նպատակներին, դրանք հետևյալներն են.

ա) ամբողջական պատմական կրթություն,

բ) գաղափարաքաղաքական, հայրենասիրական, բարոյական, զգացմունքային, մարդասիրական, բնապահպանական դաստիարակություն,

գ) բարձր քաղաքական գիտակցության մշակույթի ձևավորում:

Պատմության ուսուցման ընթացքում մեծ տեղ է հատկացվում սովորողների կամային, դրդապատճառային և զգացմունքային զարգացմանը:

Կրթական հաստատություններում պատմության ուսուցման հիմնական նպատակը գիտական աշխարհայացքի, հումանիստական մտածելակերպի և նոր պայմաններին համապատասխան արժեքային համակարգին տիրապետող անհատի ձևավորումն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմության դասավանդման նպատակները հիմնականում բաժանվում են հետևյալ փուլերի.

1. պատմության ուսուցման ընդհանուր նպատակներ
2. համադպրոցական նպատակներ
3. դասընացային (կամ ընթացիկ) նպատակներ
4. արտաուսումնական նպատակներ

Սրանք ընկած են պետական չափորոշիչների հիմքում, որոնք եթե վերածենք սխեմայի, կունենան հետևյալ տեսքը



Այստեղից բխում են պատմության դասավանդման համադպրոցական նպատակները. Պատմության դասավանդման համադպրոցական նպատակը հանդիսանում է սովորողների մոտ գիտական աշխարհայացքի ձևավորումը, որի մեջ մտնում են.

1. ամբողջական պատմական կրթություն,
2. ազգային ինքնագիտակցության ձևավորում,
3. աշխատանքային դաստիարակություն,
4. հասարակագիտական դաստիարակություն (իրավագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, փիլիսոփայություն),
5. բնապահպանական դաստիարակություն,
6. հոգևոր արժեքների գնահատում:

Այստեղ շատ կարևոր է, չշփոթել պատմության դասավանդման նպատակները, պատմության դասավանդման խնդիրների հետ, որոնք հետևյալն են.

1. մտավոր դաստիարակություն,
2. դրդապատճառակամային զարգացում և դաստիարակում,
3. զգացմունքային դաստիարակություն:

Դասագրքի և ծրագրի կառուցվածքագործառութային վերլուծության ընթացքում ուսուցիչը կատարում է գրառումներ իր աշխատանքի արդյունքների վերաբերյալ և դուրս գրում եզրահանգումները, գնահատականները, որոշում հիմնական գաղափարները, հասկացություններն ու եզրահանգումները: Երբ կառուցվածքային վերլուծությունը ավարտվում է, ուսուցիչը ձևակերպում է դասի կրթական, դաստիարակող և զարգացնող նպատակները: «Նպատակը ընդհանուր գիտական հասկացությամբ նշանակում է գործունեության արդյունքների մոտավոր կռահում» (Дайри Н. Г., 1978):

Դասի կամ դասերի վերլուծությունից հետո պարզ է դառնում, որ այստեղ խոսքը գնում է ոչ թե նպատակի այլ նպատակների վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուսուցչի կողմից շատ կարևոր է իր ուշադրության կենտրոնում պահել պատմության ուսուցման կրթադաստիարակչական նպատակները: Ինչպես ցույց են տվել մեր կողմից կատարված ուսումնասիրությունները, այն մեծ տեղ է գրավում նրանց գործունեության մեջ,

սակայն ինչպես մեթոդական գրականության, այնպես էլ ուսուցիչների ուշադրությունից հաճախ դուրս է մնում դպրոցականների զարգացման մի շարք հիմնախնդիրը:

Սովորողների բազմակողմանի զարգացում հասկացությունը շատ լայն է: Հենվելով մեր մանկավարժական բազմամյա փորձի վրա՝ ներկայացնեք, թե անհատականության ինչպիսի կողմեր կարելի է զարգացնել պատմության դասավանդման ընթացքում:

Յուրաքանչյուր դաս ունի իր նպատակները: Պատմության ուսուցումը, ինչպես և ցանկացած այլ առարկայի, առաջին հերթին ենթադրում է սովորողների ուշադրության զարգացում, առանց որի, չի կարող լինել ոչ ամբողջական կրթություն և ոչ պատմական գիտելիքների հիմնավոր ընկալում, առավել ևս յուրացում:

Ուշադրությունը զարգանում է ուսուցչի կողմից առանձնացված գործառույթների, ինչպես նաև դասագրքի և այլ պատմական գիտելիքների, հասկացությունների, օրենքների, գաղափարների ճանաչողական գործունեության հիմքի վրա: Միայն այսպես սովորողները կարող են կենտրոնանալ ուսումնասիրվող առարկայի վրա, բազմակողմանի դիտարկել և հիմնավորապես յուրացնել այն: Որքան համառորեն և ավելի հաճախ շարունակական զարգացնում են իրենց ուշադրությունը, այնքան հանգամանորեն և մանրակրկիտ նրանք յուրացնում են ուսումնասիրվող նյութը:

Ուսուցման ճիշտ կազմակերպման դեպքում սովորողների ուշադրությունը հաջողությամբ զարգանում է. այս դեպքում ուսուցիչը հենվում է նրանց անցյալի նկատմամբ ունեցած հետաքրքրությունների վրա, բայց հենց այս փուլից դպրոցականների ենթագիտակցությանը պետք է հասցնել ավելի բարդ տեսական գիտելիքներ: Սովորողների կամայական ուշադրությանը ուսուցիչը պետք է հակադրի գիտակցված ուշադրությունը, հատկապես բարձր դասարաններում:

Ուշադրության զարգացումը պետք է խելացի կառավարել, հատկապես ինքնուրույն աշխատանքների կատարման ժամանակ ցածր դասարաններում, մի բան, որի վրա պատշաճ ուշադրություն չեն դարձնում տարրական դասարանների ուսուցիչները (մեծ ուշադրություն պետք է դարձնել ընթերցանությանը, երեխաների բանավոր և գրավոր խոսքի կուլտուրայի, պատկերային մտածողության զարգացմանը, տրամաբանական խոսքի մշակմնաը և այլն): Այս պահանջը մեծ կարևորություն է ստանում հատկապես ավագ դպրոցում պատմության դասավանդման ընթացքում:

Ինչպես ցույց է տվել մեր և բազմաթիվ ուսուցիչների մանկավարժական փորձը, սկսած VII դասարանից՝ սովորողների ուշադրության զարգացումը ձեռք է բերում կայուն բնույթ, բայց դրա հետ կապված պատմություն առարկայի նկատմամբ հետաքրքրության անկում է նկատվում: Դրա համար այդ և հաջորդ դասարաններում պետք է աշխատել պատմական գիտության նկատմամբ հետաքրքրությունների վերականգնման ուղղությամբ: Հակառակ դեպքում դպրոցականների ուշադրության զարգացումը սկսում է դանդաղել և ավագ դպրոցում նրանք չեն կարողանում ընկալել մարդկային հասարակության զարգացման փուլերը, որտեղից էլ բխում է պատմության նկատմամբ ուսման ընթացքում առաջացած դժվարությունները, որոնք տանում են պատմական գիտելիքների նկատմամբ

հետաքրքրությունների կորստի, որը չի նպաստում մտավոր արդյունավետության, կամքի և զգացմունքների զարգացմանը:

Սովորողների մեծամասնությունը պատմության ուսուցման ընթացքում նախապատվությունը տալիս է ռազմական գործողությունների (հատկապես տղաները) և մշակութային թեմաների ուսուցմանը: Այստեղ մեծ կարևորություն է ստանում այն փաստը, որ պետք է դպրոցականներին սովորեցնել, թե ինչպես հետաքրքրությամբ և ուշադրությամբ ուսումնասիրել հասարակական կյանքի բոլոր կողմերը: Նրանց մոտ մշակել այնպիսի որակներ, ինչպիսիք են ուշադրության զարգացում և բաշխում, կենտրոնանալ ուսուցանվող նյութի վրա, կարողանալ հեշտությամբ անցում կատարել պատմական փաստերից, երևույթներին, իրադարձություններին, գործընթացներին և այլն: Այս ամենի իրագործումը կախված է սովորողների ընկալունակության աստիճանից և թե որքանով է ուսուցիչը կարողանում հետաքրքիր ներկայացնել պատմական համապատասխան նյութը, տիրապետում է նա ուսումնական աշխատանքի տեսակներին, մեթոդներին, կարողանում է աշակերտներին մղել գործուն ստեղծագործական աշխատանքի պատմական գիտելիքների ընկալման և յուրացման ուղղությամբ:

Դրա համար էլ ընկալունակության կատարելագործումը դպրոցականների մտավոր կարողությունների զարգացման կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ճիշտ ընկալելու պատմական փաստերի, իրադարձությունների, երևույթների և գործընթացների կերպարայնությունը: Ուսուցման այսպիսի մոտեցման դեպքում դպրոցականները փաստական նյութը ընկալում են այնպես, կարծես նրանք դառնում են պատմական իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը, իսկ դա արտատպվում է նրանց պատկերացումներում և դառնում հաստատուն ու մնայուն գիտելիք:

Պատմական իրադարձությունների, երևույթների դաստիարակության գործընթացում զարգանում են ոչ միայն սովորողների դիտողականությունը, հասարակական կյանքի նոր և բնորոշ գծերը տեսնելու ունակությունները, այլև ոչ գլխավոր երևույթներն ու առարկաները տեսնելու հատկությունները: Այն հնարավորություն է տալիս դպրոցականներին ավելի խորը ընկալելու պատմական ուսումնական նյութը, այլև յուրացնելու դրանցից բխող գործընթացները:

Դպրոցականների պատմության ուսուցման անկյունաքարային հիմնախնդիրներից մեկն էլ նրանց պատմական մտածողության զարգացումն է՝ որպես ինքնուրույն ճանաչողական գործունեության գործընթաց, խոսքը վերաբերում է այնպիսի զարգացմանը, որը օրգանապես կապված է պատմության արմատական հարցերի ուսուցման հետ և օգնում է դրանց լավագույն ընկալմանը (Дайри Н. Г., 1978):

Պատմության ուսուցման ժամանակ սովորողների մտավոր գործունեության զարգացման համար պետք է նրանց հանգեցնել հետևյալ անհրաժեշտ եզրակացությանը.

ա) ինքնուրույն վերլուծել պատմական ուսումնական նյութը, այնտեղից կարողանալ գտնել գլխավորն ու երկրորդականը,

բ) տարածության և ժամանակի մեջ ճիշտ տեղայնացնել պատմական իրադարձություններն ու երևույթները,

գ) կարողանալ առանձնացնել, համեմատել և ընդհանրացնել պատմական փաստերի էական կողմերն ու կապերը, գտնել հասարակության զարգացման օրինաչափությունները,
դ) համադրել պատմական փաստերը և վերլուծության ժամանակ իմաստավորել դրանց էությունը:

Քանի որ պատմական մտածողությունը հանդիսանում է ընդհանուր մտածողության մի մասը, ուստի պատմության ուսուցման ժամանակ շատ կարևոր է հասնել դպրոցականների մոտ այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են ինքնուրույնությունը, ապացուցելու և քննադատելու կարողությունը, ճկունությունն ու մտքերի արտահայտման խորությունը:

Գործնական աշխատանքում ուսուցիչների մեծամասնությունը ուշադրությունը դարձնում է սովորողների մոտ ըմբռնելիության, բառային տրամաբանական մտածողության զարգացման վրա: Սակայն ցանկալի է, որ աշխատանքներ տարվեն նաև զննակերպարային մտածողության զարգացման ուղղությամբ, որի ոչ բավարար լինելու դեպքում սովորողները պատմությունը յուրացնում են ձևականորեն, այսինքն սովորում են անգիր և շուտ մոռանում են, քանի որ այն չի դառնում սեփական գիտելիք, իսկ հասարակական կյանքի օրինաչափությունները չեն յուրացվում նրանց կողմից:

Պատմության ուսուցման ընթացքում մտածողության հետ մեծանում է երևակայության զարգացման գործառույթը: Փորձված ուսուցիչները այն զարգացնում են նույնքան հավասարաչափ, որքան կերպարային մտածողությունը: Երևականության շնորհիվ սովորողները մտքում զարգացնում են բառային և զննական պատմական կերպարները, որոնք ներկայացվել կամ ստեղծվել են ուսուցչի կողմից: Զննապատկերային մտածողության հաշվին դպրոցականները ստեղծագործաբար վերականգնում են անցյալի կերպարները, վերստեղծում են պատմական զարգացման ընթացքը, անցյալը յուրացնում են կենդանի տեսքով, գործում, խոսում, վերապրում են, կարծես նրանք պատմական գործընթացների մասնակիցներ են:

Առանց ստեղծագործական երևակայության և կերպարային պատմական մտածողության զարգացման ուսուցիչը չի կարող բարձրացնել սովորողների ստեղծագործարոնողական գործունեությունը, որով շատ կդժվարացնի պատմության ուսուցման ընթացքում դպրոցականների հաստատուն գիտելիքների ընկալումն ու յուրացումը և ամբողջ ուսումնական գործընթացը ընդհանրապես: V–VII դասարաններում դպրոցականները, չստանալով համապատասխան տեղեկույթ, հաճախ դրանք ընկալում են սխալ, իսկ ուսուցանվող պատմական փաստերն ու իրադարձությունները կամ չեն ընկալվում, կամ դրանք խառնվում են ավելի ուշ դարաշրջաններում կատարված երևույթներին ու գործընթացներին: Առանց այս ամենի ընկալման փոխադրվելով հաջորդ դասարան՝ նրանք սկսում են դասերը չընկալել, որը վերջնարդյունքում տանում է անտարբերության կամ լավագույն դեպքում ձևականորեն սովորում են պատմագիտական բառային ձևակերպումները:

Երևակայության մեջ մտածողության զարգացումը սերտորեն կապված է դպրոցականների խոսքի զարգացման հետ, քանի որ բառերի միջոցով է իրականություն

դառնում մտավոր գործունեությունը: Այս ամենից խուսափելու համար շատ ուսուցիչները նախ և առաջ պետք է մշակեն ու զարգացնեն սեփական խոսքը, նոր սովորողներին: Ուսուցչի և սովորողների խոսքը պետք է լինի գիտական, բայց պարզ, ճշգրիտ, որոշակի և գրագետ, իսկ այդ ամենը նրանք պետք է անեն նախօրոք՝ դասերին նախապատրաստվելու ժամանակ: Սա հատկապես վերաբերում է սկսնակ ուսուցիչներին, որոնք բավականաչափ ժամանակ պետք է ծախսեն դասերին նախապատրաստվելու համար:

Ըստ անցկացված հարցումների՝ ուսուցիչների կողմից դպրոցական ծրագրերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ նրանք թեմատիկ պլանավորման կամ օրվա պլանը կազմելիս օգտվում են պատմական գիտելիքների տարբեր աղբյուրներից, աստիճանաբար ավելի են կատարելագործվում պատմության դպրոցական դասընթացին տիրապետելու նրաց կարողությունները:

Պատմական գլխավոր փաստերի հաղորդման ժամանակ ուսուցչի խոսքը պետք է լինի վառ, կերպարային, համոզիչ, անհրաժեշտության դեպքում զգացմունքային, իսկ տեսական նյութի պարզաբանման ժամանակ տրամաբանական, ապացուցող փաստերով: «Այս ամենը ուսուցիչների մոտ ի ծնե չեն լինում, դրանք ձեռք են բերվում տարիների քրտնաջան աշխատանքի ընթացքում» (Гора П.В., 1988):

Շատ կարևոր է ուսումնական նյութի հաղորդման ընթացքը: Ուսուցչի արագ խոսքը դժվարացնում է սովորողների կողմից դրա ընկալումն ու իմաստավորումը, իսկ դանդաղ խոսքը ծախսում է ավելորդ ժամանակ և կորցնում սովորողների մոտ ուսուցանվող նյութի նկատմամբ հետաքրքրությունը:

Փոխելով պատումի ընթացքը՝ փորձված ուսուցիչը ավելի եռանդուն և պատկերովոր է ներկայացնում պատմական նյութը, իսկ «նրա կողմից կատարվող կրկնությունները օգնում են սովորողներին մտածել, որ դա է գլխավորը, պարզաբանել փաստերի և իրադարձությունների էությունը, ձևակերպել տեսական եզրահանգումներն ու ընդհանրացումները» (Вяземский Е.Е. & Стрелова О.Ю., 2015):

Դասի ներկայացումը չպետք է լինի միապաղաղ: Այն ուսուցիչները, որոնք չեն կարողանում կարգավորել իրենց ձայնային ելևէջները գլխավորը և երկրորդականը ներկայացնելու ընթացքում, չեն կարող ապահովել դասի ուսուցողականության որակյալ մակարդակ:

Ցանկալի է, որ ուսուցիչն իր խոսքում օգտագործի կառույցներ կամ բանաձևեր, որոնք արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի կոլորիտը, խոշոր պատմական անհատների և պատմական իրադարձությունների մասնակիցների թևավոր դարձած խոսքերը, ժամանակին ընդունված կոչերը, որոնք ցույց են տալիս նաև պատմական իրադարձությունների և իրավիճակների փոփոխման ընթացքն ու հետագա զարգացումները:

«Ֆրանսիական մեծ հեղափոխությունը» թեման ուսումնասիրելիս ուսուցիչը պարտադիր պետք է ներկայացնի ֆրանսիական հեղափոխության առաջնորդների կոչերը՝ «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն կամ մահ» (1791թ.), «Կեցցե ազգը», «Մահ

կամ ազատություն», «Առաջ, հայրենասերնե՛ր», որոնցով ոգևորված ժողովուրդը շարժվեց և գրավեց Տյուրլիի պալատը:

Ուսուցչին կոլորիտային նյութերի ընտրության գործում շատ են օգնում պատմագեղարվեստական ստեղծագործությունները, քրեստոմատյաները, տարբեր բաշխիչ նյութեր:

Պատմության ուսուցման կարևոր խնդիրներից է դպրոցականների հիշողության զարգացումը: Ուսումնական գործընթացում ընդունված է կարևոր տեղ հատկացնել գիտելիքներին, բայց ոչ բոլոր ուսուցիչներն են ուսուցանում հիշողության զարգացման արդյունավետ եղանակները, որոնք խանգարում են դպրոցականների հիշողության արդյունավետ զարգացմանն ու կատարելագործմանը:

Չտիրապետելով հիշողության եղանակներին՝ սովորողների մեծ մասը չափից շատ ժամանակ է տրամադրում տանը դասերի նախապատրաստմանը, որը նրանց ծանրաբեռնվածության պատճառներից մեկն է, հատկատես պատմություն ուսումնասիրելու առաջին երկու տարիներին. տեսնելով, որ նյութը բարդ է, նրանք հիասթափվում են, դառնում անտարբեր ու սկսում են չսովորել: Այս դասարաններում ուսուցիչը պետք է աշխատի զարգացնել դպրոցականների մեխանիկական հիշողությունը, որը «նկատելիորեն կբարձրացնի պատմական գիտելիքների որակն ու ընկալունակության արդյունավետությունը» (Вяземский Е.Е. & Стрелова О. Ю., 2012): Այդ պատճառով այստեղ գլխավոր մեթոդական պայմանը պետք է լինի ծանրաբեռնվածության թեթևացումը և արդյունավետության ու որակի բարձրացումը, քանի որ դրանք հանդիսանում են դպրոցականների մոտ ուսումնական նյութի իմաստային զարգացման և հիշողության եղանակների արդյունավետ ընկալման ուղիներից մեկը:

Դպրոցականների ազատ հիշողությունից զատ, պետք է զարգացնել պարտադիր հիշողությունը, որը կապված է անընդհատ կրկնությունների, տարբեր տեսակի դասերի ընթացքում՝ պատմական պարտադիր գիտելիքների ամրապնդման, օրինաչափությունների, սոցիալ-տնտեսական, քաղաքական կապերի ու հարաբերությունների, ժամանակագրության, տարածապատկերային մտածողության ձևավորման և այլ հարցերի հետ: Այս ամենի իրականացմանը նպաստում են միջառարկայական և միջդասընթացային կապերի, ուսումնական նյութի ընկալմանն ու յուրացմանը, դպրոցականների ուսումնաորոնողական գործունեության զարգացմանը, իսկ դրա համար նրանից պահանջվում են կամային մեծ ջանքեր: Լավ մտածված ստուգումն ու գիտելիքների համակարգված կրկնությունը հանդիսանում են սովորողների կամքի ձևավորման պարտադիր կողմերից մեկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ պատմության ուսուցման ժամանակ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կատարելագործել սովորողների մտավոր գործընթացները՝ ուշադրությունը, ընկալումը, մտածողությունը, պատկերացումները, հիշողությունը, խոսքը: Նրանց մտավոր զարգացումը անքակտելիորեն կապված է կամքի և զգացմունքների դաստիարակություն

հետ: Այստեղ կարևոր դեր են կատարում ուսման դրդապատճառներն ու ուսումնական նյութի բովանդակությունը և պատմության նկատմամբ հետաքրքրությունների առաջացման ուսուցչի կարողությունները:

Ուսումնական աշխատանքի հիմնախնդիրները և սովորողների մտավոր զարգացումը անխզելիորեն կապված է ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորման հետ, իսկ դրանք հիմնականում ընդգրկված են ուսումնական ծրագրերում: Այսպիսով՝ ըստ մեր ուսումնասիրությունների, ընդհանուր գծերով այսպիսին են դպրոցական պատմական կրթության ուսումնադաստիարակչական նպատակները և դպրոցականների ինքնուրույն ճանաչողության զարգացման փուլերը այս գործընթացում: Այս ամենը հաշվի չառնելը կրթական գործընթացի վերջնական փուլում կհանգեցնի պատմական կրթության նպատակների անկատարությանը, որն իր հերթին կհանգեցնի երիտասարդ սերնդի մոտ հայրենասիրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ հիմնախնդիրների վերաբերյալ եզրահանգումների կատարման անկատարությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Бахмутова Л.С., Калуцкая Е.К. (2016). *Методика преподавания обществознания*. Москва.

Вяземский Е.Е., Стрелова О.Ю. (2015). *Педагогические подходы к реализации концепции единого учебника по истории*. Москва.

Вяземский Е.Е., Стрелова О. Ю. (2012). *Теория и методика преподавания истории*. Москва.

Гора П.В. (1988). *Повышение эффектижности обучения истории в средней школе*. Москва.

Дайри Н. Г (Ed.). (1978). *Методика обучения истории в средней школе* 2*(2)*. Москва.

Шоган В.В., Сторожакова Е.В. (2019). *Методика преподавания истории в школе*. Москва.

REFERENCE LIST

Bahmutova L.S., Kaluckaya E.K. (2016). Metodika prepodavaniya obshchestvoznaniya *(Methods of teaching social science)*. Moskva.

Vyazemskij E.E., Strelova O.YU. (2015). Pedagogicheskie podhody k realizacii koncepcii edinogo uchebnika po istorii *(Pedagogical approaches to the implementation of the concept of a unified history textbook)*. Moskva.

Vyazemskij E.E., Strelova O. YU. (2012). Teoriya i metodika prepodavaniya istorii *(Theory and methodology of teaching history)*. Moskva.

Gora P.V. (1988). Povyshenie effektizhnosti obucheniya istorii v srednej shkole. *(Increasing the effectiveness of teaching history in secondary schools)*. Moskva.

Dajri N. G. (Ed.). (1978). Metodika obucheniya istorii v srednej shkole *(Methodology of teaching history at secondary school)*, (2nd ed., Vol. 2). Moskva.

SHogan V.V., Storozhakova E.V. (2019). Metodika prepodavaniya istorii v shkole. (*Methodology of teaching history at school)* M oskva.

ABSTRACT

THE PURPOSES OF CO-SCHOOLED TEACHING HISTORY AND THE WAYS TO ACHIEVE THEM

PAPOYAN H.

The article represents the purposes of co-schooled teaching history and several ways of their achievement.

During the process of teaching history there are several important ways to improve for reaching the aim: attention, perception, thinking, imagination, memory and speech. Their intellectual development inextricably is connected with the will and upbringing of the emotions. Here the significant role are not only based on the teaching motivation and the content of the teaching material but also the teacher's abilities to arose interest in history.

Consequently, our investigation is connected with the educational upbringing purposes of teaching history and the development stages of independent cognition at school in this process.

Ignoring all this at the last stage of educational process will bring to the imperfection of the purposes of historical education. So the latter in its turn will influence the imperfection of drawing conclusions in patriotic, social-economic, political, cultural and other problems among the young generation.

Key words*:* state standard, teaching purposes, teaching problems, attention, speech, imagination, thinking, educational.

РЕЗЮМЕ

ОБЩЕШКОЛЬНЫЕ ЦЕЛИ ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ И ПУТИ ИХ ДОСТИЖЕНИЯ

ПАПОЯН А.

В статье представлены общешкольные цели исторического образования и ряд путей их достижения. Для достижения поставленных целей при обучении истории необходимо совершенствовать психические процессы учащихся: внимание, восприятие, мышление, представления, память, речь. Их психическое развитие неразрывно связано с воспитанием воли и эмоций. Большую роль здесь играют мотивы обучения, содержание учебного материала, способность учителя вызвать интерес к истории.

Проблемы учебной работы и интеллектуального развития учащихся неразрывно связаны с формированием самостоятельной познавательной деятельности и в основном включены в образовательные программы.

Таким образом, в целом, по нашему мнению, таковы воспитательные цели школьного исторического образования и этапы развития самостоятельного познания школьников в

этом процессе. Неучитывая всего этого на заключительном этапе образовательного процесса приведет к несовершенству целей исторического образования, что, в свою очередь, приведет к несовершенству выводов по патриотическим, социально-экономическим, политическим, культурным и др. проблемы среди подрастающего поколения.

Ключевые слова: государственный стандарт, цели обучения, задачи обучения, внимание, речь, воображение, мышление, обучение.